1. Շատերն են ներկա
հարսանիքին,
Սիրով են մասնակցում խնջույքին,
Այն խորհուրդն է երկնային,
Երբ կտեսնենք մեր Փրկչին:
Այն խորհուրդն է երկնային
Երբ միանանք Փեսային:

Ճերմակ (3) թող լինեն
Հանդերձներդ, ո՛վ հարս,
Գլխիդ յուղը թող չպակասի,
Ո՛վ իմ քույրիկ՝ հարս,
Քանզի փեսան է եկել
Նրան երկար ես սպասել,
Ու սիրտդ ուրախություն է լցվել:
Քանզի փեսան է եկել,
Նա քեզ երկար է սպասել,
Իր սիրտն էլ հրճվանքով է լցվել:

2. Ձեր կյանքում միայն բարիք
տեսնեք,
Ձեր որդկանց որդիներին տեսնեք,
Աստծո Խոսքին վստահեք
Եվ երջանիկ լինեք:

***

1. Շատերն են կանչված
հարսանիքին,
Քչերն են լինելու խնջույքին:
Ով ճերմակ հանդերձ ունի՝
Երկնքում կհայտնվի (Նա էլ
երկինք կմտնի):
Ով ճերմակ հանդերձ ունի՝
Խնջույքին կմասնակցի:

Ճերմակ (3) թող լինեն
Հանդերձներդ, ո՛վ հարս,
Գլխիդ յուղը թող չպակասի,
Ո՛վ Քրիստոսի հարս,
Քանզի Փեսան է գալու,
Քեզ երկինք է տանելու,
Երկնքում մեծ խնջույք է լինելու:

2. Հիշե՛ք այն իմաստուն
կույսերին,
Որ լապտերում շատ յուղ ունեին:
Քանի ուշ չէ՝ պատրաստվի՛ր,
Լապտերում յուղ հավաքի՛ր,
Քանի ուշ չէ՝ պատրաստվիր,
Քո Փեսային դու սպասիր: